

Սեդա Ք. Գասպարյան

Բանասիր. գիտ. դոկտոր

**ԼԵԶՎԻ ՄՏԱՇԱՀԱՐԿԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐԻ
301-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՒՄ***

Քանալի բառեր - լեզվաբանության և իրավագիտության փոխհատում, Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդված, մարդու իրավունքներ, ազատ խոսքի իրավունք, լեզվական չարաշահում, մտաշահարկային ռազմավարություններ, պետության օրենքներով ամրագրված նվաստացում:

Մուտք

Ակնհայտ է, որ ցանկացած տեղեկություն, այդ թվում՝ իրավագիտական, գրանցվում, փոխանցվում և հասցեատիրոջ կողմից ընդունվում է լեզվի միջոցով, իսկ այն հանգամանքը, որ իրավունքի լեզուն ներկայումս հայտնվել է արտալեզվական տարբեր գործոնների ազդեցության ներքո, առավել կարևոր է դարձնում այդ լեզվի դերը հատկապես միջազգային հաղորդակցական դաշտում: Հետևաբար լեզուն է, որ հուսալի գործիք է իրավագիտական հաղորդակցության իրականացման ոլորտում:

Լեզվական հաղորդակցությունը, ըստ էության, իրականության փոխանցումն է մի գիտակցությունից մյուսին: Շրջապատող աշխարհն ըմբռնել նախ և առաջ նշանակում է մեծ զգուշավորությամբ ու խնամքով վերաբերվել բառերին և իրականությունն արտացոլելու նրանց ներուժին, քանզի ամեն ինչ ընկալելի է դառնում հենց բառերի օգնությամբ, և հենց բառերն են, որ օգնում են մարդուն հաղորդելու իր գաղափարները և վերարտադրելու իրականությունը: Այստեղից էլ բառի առաջնային ու կարևորագույն արժանիքը՝ իրականության վրա հիմնված հաղորդակցություն իրագործելը, մի բան, որ հաղորդակցական որևէ այլ միջոց անկարող է նույն լիարժեքությամբ իրականացնել¹: Այդուհանդերձ, խոհեր ու խորհրդածություններ փոխանցելու՝ լեզվի այս կարևոր հատկությունը հաճախ գործածվում է ի չարս, աղնատվում ու խեղաթյուրվում հանուն անազնիվ նպատակների և քարոզչության: Ուստի բառերի՝

* Հոդվածն ընդունվել է տպագրության 11.01.2020:

1 Տե՛ս **Pieper J.**, Abuse of Language Abuse of Power, San Francisco, "Ignatius Press", 1992:

անագնիվ միտումներով **մտաշահարկումը** (manipulation) մարդկանց գիտակցությունը վերահսկելու անընդունելի ձև է, ճշմարտությունն աղավաղելու և իրականության փոխարեն կեղծ ու պատիիր արժեքներ քարոզելու խորամանկ քաղաքականություն:

Հաճախ ճշմարտությունն ու իրականությունը հաղորդելու կամ ճշգրիտ ու հասկանալի գաղափարներ ներկայացնելու առաքելությունը փոխարինվում է մարդկանց վարքագիծը կառավարելու և որոշակի շահադիտական նպատակների հասնելու մտադրությամբ, որն էլ իրականացվում է քաղաքական և իրավագիտական լեզվի չարաշահման ճանապարհով:

Քիչ չեն այն դեպքերը, երբ որոշակի լեզվական միջոցների ընտրությունը իրավագիտական դիսկուրսում հաճախ կարող է հատուկ նպատակաուղղվածություն ունենալ՝ իրականության աղավաղում ու փաստերի քողարկում, մտքերի երկիմաստ ու աղոտ ձևակերպումների ներմուծում: Մտաշահարկային նպատակով ընտրված լեզվական տարբեր տարբեր կարող են պայմանական թվալ, և այստեղ է, որ մտաշահարկային լեզվի քննությունն ու մեկնությունը կարևորվում են ճշմարտությունը բացահայտելու առումով²:

Այս հոդվածում մեր նպատակն է վեր հանել Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի երկու՝ 2005 թ. և 2008 թ. տարբերակներում միտումնավոր կիրառված մտաշահարկային մարտավարությունը, փաստական նյութի քննությամբ բացահայտել, որ այդ փաստաթղթերում կոպտորեն խախտված են օրենքի՝ հստակ, ճշգրիտ ու հասկանալի գաղափարներ արտահայտելու հիմնարար գործառույթները, քանզի դրանք մարդկանց կառավարելու, նրանց ընկալումներն ու մեկնություններն ուղղորդելու և առարկայական արդյունքներ ստանալու նպատակ են հետապնդում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկիմաստ, ոչ հստակ բառերի գործածությունը Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի առաջին տարբերակի բնորոշ հատկանիշն է, որը վերաբերում է թուրքականությունը, Հանրապետությունը կամ Թուրքիայի ազգային մեջլիսը անարգելուն³: Եվ հենց այդ էր պատճառը, որ թուրքական իշխանություններին պարտադրվեց շտկումներ անել փաստաթղթի երկրորդ տարբերակի ձևակերպումներում⁴:

2 Այս հոդվածում բարձրացված խնդիրները նախնական քննարկման են ներկայացվել երկու միջազգային գիտաժողովներում՝ International Scientific Conference “LAW 2018 Current Problems of Law and Legal Science”, Belgrade, Serbia, May 4-5, 2018 և International Conference “Language, Culture, Communication” dedicated to the Centenary of Yerevan State University, Yerevan, Armenia, September 12-15, 2019:

3 Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի այս տարբերակն ընդունվել է 2005 թ. հունիսի 1-ին (տե՛ս Leicht J., Turkey: Court Drops Prosecution of Writer Orhan Pamuk, 2006. World Socialist web site. **ICFI. Archived** from the original on 25 July 2008):

4 Երկրորդ տարբերակն ընդունվել է 2008 թ. ապրիլի 30-ին (տե՛ս Algan B., The Brand New Version of Article 301 of Turkish Penal Code and the Future of Freedom of Expression Cases in Turkey, German Law Journal, vol. 9, N 12, 2008):

1. Լեզվական մտաշահարկում և մտաշահարկային մարտավարություններ

Եթե փորձենք հասկանալ «մտաշահարկում» հասկացության էությունը, ապա կնկատենք, որ տարբեր բառարաններ գրեթե միաձայն մեկնաբանում են այն որպես «ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան հմտորեն և խորամանկորեն կառավարելը կամ ուղղորդելը՝ հատկապես ազդեցություն կամ անագնիվ մեթոդներ օգտագործելով»⁵: Մտաշահարկային ռազմավարությունների կիրառումը միտված է հաջողությամբ ի կատար ածելու խարդախ նպատակներ, ներգործելու հասարակության վրա և փոխելու մարդկանց վարքագիծը կամ ընկալումները, և դա արվում է գաղտագողի, կեղծ ու մոլորեցնող մարտավարություններ կիրառելով: Անհատական կամ խմբային մտաշահարկում իրականացնելիս դրդապատճառները կարող են տարբեր լինել, բայց դրանց շարքում ամենակարևորը ամեն գնով սեփական նպատակներն ու անձնական շահն առաջ մղելու ձգտումն է՝ ըստ էության առանց հաշվի առնելու այլ մարդկանց կամ հասարակության շահը և խթանելով նրանց անձնահանձության մղումները⁶: Այլ կերպ՝ մտաշահարկումը հասարակական երևույթ է, «հաղորդակցական և փոխներգործական հմտությունե, երբ մտաշահարկողը, մարդկանց կամքին և շահերին հակառակ, վերահսկում է նրանց: Առօրյայում գործածվելիս «մտաշահարկում» հասկացությունը բացասական գույնով զուգորդություններ է առաջացնում, քանզի դրա կիրառմամբ հասարակական նորմերը ոտնահարվում են⁷:

Ընդհանուր առմամբ մտաշահարկման շնորհիվ անհատը կամ խումբը հասնում է ցանկալի արդյունքի՝ անտեսելով կամ վնասելով մյուս կողմի կամ, լայն առումով, հանրության ձգտումները՝ նպատակ ունենալով գերիշխելու և վերարտադրվելու տարբեր ձևերով: Մտաշահարկումը գլխավորապես իրագործվում է ամերևույթ օբյեկտիվ, համոզիչ, խորամանկ և ապակողմնորոշող լեզվի օգնությամբ: Իհարկե, բազմաթիվ այլ մտաշահարկային հմտություններ նույնպես կան, որոնք կիրառվում են տարբեր հաղորդակցական իրադրություններում, սակայն, սույն հետազոտության թեմայով պայմանավորված, ուշադրությունը կենտրոնացրել ենք այն մարտավարությունների վրա, որոնք, անմիջականորեն թե միջնորդավորված, առնչվում են իրավագիտական դիսկուրսում իրացվող բառային մտաշահարկմանը⁸:

5 Oxford Advanced Learner's Dictionary of Current English, Oxford, OUP, 1980, p. 517:

6 Տե՛ս Braiker H. B., Who is Pulling Your Strings? How to Break the Cycle of Manipulation? NY: McGraw-Hill, 2004:

7 Տե՛ս Van Dijk T. A., Discourse and Manipulation, Discourse and Society, 17/2, 2006, էջ 360:

8 Անօրինական, մտաշահարկային ազդեցություն կարելի է գործել նաև ոչ բառային միջոցներով, ինչպիսիք են, օրինակ, պատկերները, լուսանկարները, ծաղրանկարները, տեսանյութերը: Քաղաքական և իրավագիտական դիսկուրսներից բացի այս երևույթն ավելի տիպական է զանգվածային մեդիայի ոլորտում, որտեղ հաճախ են կիրառվում մտաշահարկային մարտավարություններ:

Մտաշահարկման երևույթը լավ պատկերացնելու համար էապես կարևոր է հասկանալ, որ այս գիտաբառը մտովի գուգորդվում է **«հնարամտություն»** ու **«ճարտարամտություն»** հասկացությունների հետ և միանգամայն բնորոշ է լեզվական մտաշահարկման համակարգին⁹: Պատահական չէ, որ Ն. Ֆերբրոուն, բացատրելով լեզվի անագնիվ կիրառության մեջ տեղ գտնող խոսքային ռազմավարությունների ու նպատակների քողարկվածության փաստը, լեզվական մտաշահարկումը որակում է որպես լեզվի գիտակցված կիրառություն՝ զարտուղի ճանապարհով այլոց վերահսկելու և կառավարելու համար¹⁰:

Հետաքրքրական է, որ տարբեր մակարդակների լեզվական նշաններն օգնում են վեր հանելու այն մտադրությունները, որոնք խոսողը, շնորհիվ կառավարման իր հմտությունների, կարողանում է խնամքով քողարկել¹¹, և ի ցույց դնել լեզվական շահարկումների ու խաթարումների դեպքերը, որոնք գիտակցված կառավարման են ենթարկվում խոսողի կողմից: Այլ կերպ՝ դիսկուրսի մտաշահարկային բնույթը պայմանավորված է ոչ թե հատուկ լեզվական միավորների կիրառությամբ, այլ նրանով, թե ինչպիսին է այդ միավորների և մտաշահարկողի նպատակների ու դրդապատճառների հարաբերակցությունը: Մտաշահարկային դիսկուրսի վերլուծությունը ցույց է տալիս, որ լեզուն ինքնին ինչ-որ չափով խրախուսում է իրականությունից շեղվելու, խոսքն աղավաղելու միտումը և այնպիսի լեզվական միջոցների կիրառումը, որոնք անստույգ, անորոշ ու ծածուկ հնարներ գործադրելու հնարավորություն են ընձեռում:

Լեզվի միջոցով կատարվող ուղղորդման հիմքում այն փաստն է, որ ունկնդիրը կամ ընթերցողը նախ և առաջ ընկալում և մեկնաբանում է հատուկ ընտրված բառերի հիմնական իմաստները, որոնք սովորաբար դրական տեղեկատվություն են պարունակում, և ուշադրություն չի դարձնում տողերի արանքում թաքնված բացասական երանգներին:

Բառային ուղղորդման շինծու բնույթով է կանխորոշվում երկիմաստ արտահայտությունների և իմաստային առումով ոչ հստակ միավորների (օրինակ՝ կրկնակ բառերի) գործածությունը մտաշահարկային դիսկուրսում, և հենց այս պատճառով է, որ այսպիսի դիսկուրսի իմաստային որակների վերհանումը հեշտ գործ չէ, քանզի վերահսկման ու կառավարման համար կիրառվող մարտավարություններն իրենք են պահանջում այնպիսի բառերի գործածություն, որոնք մտաշահարկային վարվելակերպի մեխանիզմներ են ներմուծում դիսկուրս¹²:

9 Տե՛ս **Dotsenko E.**, Psychology of Manipulation: Phenomena, Mechanisms and Protection. Moscow: CheRo Publisher State University, 1997:

10 Տե՛ս **Fairclough N.**, Manipulation, Encyclopedia of Language and Linguistics. Kidlington: Pergamon Press, 1994, էջ 2360:

11 Տե՛ս **Akopova A.**, Linguistic Manipulation: Definition and Types, IJCRSE, 1 (2), 2013, էջ 3:

12 Տե՛ս Linguistic Persuasion, 2017, Wikibooks:

Մտաշահարկումն ուղղակիորեն կապված է իշխանության ձգտելու և ամբողջավարման հռետորաբանություն կիրառելու հետ, ընդ որում, մտաշահարկում իրականացնողները (անհատ լինի թե խումբ) հմտորեն տիրապետում են այս մեխանիզմների կիրառման վարպետությանը: Ճարտար լեզուն և համոզելու անվերապահ հմտությունը միշտ էլ օգնում են նրանց գերակա դեր ստանձնելու ցանկացած հարաբերության մեջ: Եվ քանի որ նրանց մտահոգությունը ոչ թե բարձրագույն արժեքներն են, այլ իրենց շահերի բավարարումը, նրանք շատ զգուշավոր են ներկայանում, որպես թե կրողն են նույն արժեքների ու գաղափարների, ինչ շահարկվողները: Մինչդեռ իրականում հմուտ շահարկողի բուն նպատակը այլոց մտքերն ու գաղափարներն իր հսկողության տակ պահելն է: Թվացյալ բանական ու հիմնավորված մեթոդներ գործադրելով է, որ նրանց հաջողվում է անկողմնակալի ու խելամիտի տպավորություն թողնել ունկնդրի վրա: Սակայն, փաստորեն, ո՛չ տեղեկատվությունն է լիարժեք մատուցվում հասցեատիրոջը, ո՛չ էլ տեսակետներն ու համոզմունքները¹³:

Լեզուն չարաշահելով՝ մտաշահարկողն իրականում խախտում է ճշմարտությունը հաղորդելու լեզվի հիմնական գործառույթը՝ դրանով իսկ խթանելով ստի՛ն առնչվող սխալ գուգորդությունների ծնունդը: Խոսքի այս ռազմավարությունը կառավարում է հասցեատերերին և տրամադրում նրանց այնպես գործելու, որ հասցեագրողը կարողանա շոշափելի արդյունքներ ստանալ: Այլ կերպ՝ բռնությունը, քարոզչությունն ու իշխանության չարաշահումը հանգեցնում են լեզվի չարաշահման¹⁴, որի հետևանքով խեղաթյուրվում և փոփոխվում են նույնիսկ ամենասակնհայտ ճշմարտությունները: Լեզվի խեղաթյուրումը, որ նույնն է, ինչ լեզվական միավորների շփոթեցնող ու ապակողմնորոշող կիրառությունը, լեզվական մտաշահարկման ամենաբնորոշ հատկանիշն է, և այս վտանգավոր գործընթացը կարող է աղճատել ու այլասերել մարդու գիտակցությունն ու միտքը¹⁵: Լեզուն չարաշահելիս այլափոխվում է իրական պատկերը, ինչը նշանակում է, որ խնդրո առարկան հասարակությանը կողմնակալ է ներկայացվում: Ընդ որում, թեև ուղղորդելու նպատակով կիրառվող տարբեր լեզվական տարրերի (ձևաբանական, իմաստային, շարահյուսական) հնարավոր ընտրությունը կարող է կամայական թվալ քաղաքական և իրավաբանական դիսկուրսներում, սակայն իրականում դա այդպես չէ, քանի որ այդ ընտրությունը սովորաբար արվում է այն դեպքում, երբ խոսողը որոշակի նպատակներ է հետապնդում: Ընդ որում, լեզվական միավորների այս կամ այն ընտրությունը կարող է ի ցույց դնել որոշակի մտածելակերպ, աշխարհայացք կամ գաղափարախոսություն, որն էլ իր հերթին օգնում է ուղղորդողին իրագործելու մարդկանց և, լայն առումով, հասարա-

13 Տե՛ս **Richard P. and Elder L.**, *The Thinker's Guide to Fallacies: The Art of Mental Trickery and Manipulation*, Foundation for Critical Thinking, 2004, էջ 4-5:

14 Տե՛ս **Pieper J.**, *Abuse of Language. Abuse of Power*. San Francisco, "Ignatius Press", 1992:

15 Այս առումով հետաքրքիր են Ջորջ Օրվելի անդրադարձները: Տե՛ս, օրինակ, **Orwell G.**, *Politics and the English Language*. Peterborough, "Broadview Press", 2006):

կույթյան մտաշահարկում՝ իր մտքին որոշակի ձևակերպում տալով և օգտագործելով տարբեր քերականական ու ոճական միջոցներ: Հետևաբար հասկանալի է, որ դրանց համապատասխան մեկնաբանությամբ կարելի է բացահայտել խոսողի մտադրությունները¹⁶:

«Մտաշահարկում» հասկացության իրավագիտական սահմանման քննությունը բացահայտում է հոմանշային բացատրություններ (**փոփոխության, վերահսկման, գերիշխանության գործադրման, չարաշահման, խաբեության մեթոդների, կառավարելու, կառավարելու, խորամանկելու, խուսանավելու** և այսօրինակ այլ իմաստներ)¹⁷, որոնց մեծ մասն ընդհանուր առմամբ կապված է մտաշահարկման գործողության կամ գործընթացի և իրավագիտական դիսկուրսում իրականացվող լեզվական շահարկման հետ: Իրավական փաստաթղթում որոշակի լեզվական միավորներ փոփոխելով, վերասահմանելով և հաճախ նաև հնարամտորեն նենգափոխելով՝ հնարավոր է մոլորեցնել մարդկանց և ստիպել, որ կարդացածը հասցեագրողի օգտին մեկնաբանեն:

2. Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը

Անդրադառնալով հետազոտության նյութին, այսինքն՝ Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածին, նախ նշենք, որ Թուրքիայի քրեական օրենսգրքն ուժի մեջ է մտել 2005 թ. հունվարի 1-ին: Ինչ վերաբերում է խնդրո առարկա իրավական դրույթին (հոդված 301), այն նոր չէ թուրքական օրենսդրության մեջ: Թուրքիայի նախկին քրեական օրենսգրքի 159-րդ հոդվածը, որն ուժի մեջ էր 1926 թվականից և գործեց մինչև 2005 թվականը, գրեթե նույն բովանդակությունն ուներ:

Եվրամիությանն անդամակցելու բանակցություններին ընդառաջ՝ Թուրքիան այդ միջազգային կառույցի չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով 2005 թ. հունիսի 1-ին հոդվածը ներկայացվել է որպես քրեական իրավունքի բարեփոխման փաթեթի մաս: Սակայն արդեն 2005 թ. դեկտեմբերին «Amnesty International»-ը 301-րդ հոդվածը համարել է ուղղակի սպառնալիք մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին¹⁸:

301-րդ հոդվածի սկզբնական տարբերակում **թուրքականության անարգումը** (denigration of Turkishness) համարվում էր հանցագործություն: Ընդհանուր առմամբ տեքստն այնպես էր ձևակերպված, որ քրեականացվում էր քննադատական մեկնաբանությունների և հաղորդումների, թուրքերի կամ Թուրքիա-

16 St'u Berariu E. C. and Peterlicean A., The Power of Language in Political Discourse, Multicultural Representations. Literature and Discourse as Forms of Dialogue. Vol. 4. Tirgu Mures, "Arhipelag XXI Press", 2016, էջ 189:
 17 St'u Legal Dictionary. The Free Dictionary by Farlex, 2018:
 18 St'u Turkey: Article 301 is a Threat to Freedom of Expression and Must be Repealed Now, Amnesty International Public Statement (December 2005):

յի նկատմամբ բացասական վերաբերմունք արտահայտող կարծիքների լայն շրջանակ: Սկզբնական շրջանում հողվածի տեքստն առանձնակի ուշադրության չարժանացավ, սակայն հետագայում՝ դատական մեծաքանակ աղմկահարույց գործերից և քրեական հետաքննություններից հետո, այն բազմիցս արծարծվեց թե՛ Թուրքիայում և թե՛ Եվրամիությունում: Ավելի քան 60 հայտնի համալսարանական պրոֆեսորներ, գրողներ, լրագրողներ 2005 թ. հունիսից մինչև 2006 թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում դատական կարգով հետապնդվեցին հողվածի ուժի մեջ մտնելուց հետո: Այս մարդիկ կանգնեցին ոչ միայն երեք տարվա ազատազրկման, այլև ահաբեկման ու բռնության ենթարկվելու հեռանկարի առջև: Վառ օրինակ է հանրահայտ թուրք արձակագիր Էլիֆ Շաֆակը, որը 2006 թ. հուլիսին բախվեց անարդար դատավարության փաստին: Հետաքրքիրն այն է, որ Շաֆակին թուրքականությունը հրապարակավ անարգելու համար հնարավոր չէր ուղղակիորեն մեղադրել, քանի որ նա ինքը ոչ ֆիզիկական գործողությամբ և ոչ էլ խոսքով որևէ կերպ չէր գործել պետության դեմ: Սակայն նրան պատասխանատու ճանաչեցին և դատական պատասխանատվության ենթարկեցին «Ստամբուլի ընկեցիկը» վեպի գեղարվեստական կերպարի հնչեցրած արտահայտությունների համար¹⁹: Դա, ըստ էության, առաջին թուրքական վեպն էր, որն «ուղղակիորեն անդրադառնում էր օսմանյան իշխանությունների վերջին տարիներին իրականացրած կոտորածներին, վայրագություններին և տեղահանություններին, որոնք ոչնչացրին երկրի հայ բնակչությունը»²⁰: Այս դեպքը չհարուցեց հրատարակիչների և գրքի ընթերցողների զարմանքը, քանզի նրանք չէին էլ կասկածում, որ հենց այդպիսի վերաբերմունք է սպասվում ցանկացած լավ գրողի, որի խստապահանջ ձայնը մի օր լսելի կդառնա Թուրքիայում: Իր դեմ ներկայացված մեղադրանքների մասին խոսելիս Էլիֆ Շաֆակը համոզմունք էր հայտնում, որ դրանց հիմքում ընկած պատճառն իր ակտիվ անդրադարձներն էին արգելված թեմաներին և մասնավորապես Հայոց ցեղասպանությանը: Է. Շաֆակը քաջ զիտակցում էր, որ թուրքական իշխանությունները երբեք չեն հասկանա իր՝ Թուրքիայում բաց և դեմոկրատական հասարակությանն աջակցելը և ազգայնամոլության, մեկուսացվածության ու այլաոյացության բոլոր դրսևորումները մերժելը, հատկապես, որ խոսքի ազատության դեմ այս անհանդուրժողականությունն ու ագրեսիան պաշտոնապես ամրագրված են իր երկրի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածում:

19 Էլիֆ Շաֆակի «Ստամբուլի ընկեցիկը» (2005) վեպը գրվել է անգլերեն, իսկ 2006 թ. տպագրվել է վեպի թուրքերեն թարգմանությունը: Գրքի հերոսներից մեկը Արմանուշը, ասում է. «Ես ցեղասպանությունից փրկվածների թոռ եմ, որոնք 1915 թվին թուրք մսագործների պատճառով կորցրել են բոլոր հարազատներին, բայց քանի որ ինձ մեծացրել է Մուստաֆա անունով մի թուրք, ես գաղափարական մշակման են ենթարկվել, որպեսզի ժխտեն ցեղասպանությունը»: Շաֆակին արդարացրին, և նրա գործը կարճվեց, քանի որ մեղադրողը հայտարարեց, որ 301-րդ հոդվածով նախատեսված հանցակազմ չկա (տես **Alan B.**, նշվ. աշխ., էջ 2239): Սակայն հետագայում գործը տեղափոխվեց ավելի բարձր դատական աստիճանի, և իշխանություններին հաջողվեց բեկանել այս որոշումը:
20 **Lea R.**, In Istanbul, a Writer Awaits her Day in Court, *The Guardian* (24 July 2006).

դունել, որ 301-րդ հոդվածի առնչությամբ խնդիրներ կան, և օրենքում փոփոխություններ են անհրաժեշտ²⁷: Թուրքական իշխանությունների պարտադրվեց բարեփոխել հոդվածը, որովհետև խոսքի ազատությունն ընդհանուր առմամբ դեմոկրատիայի հիմնասյունն է, նաև այն գլխավոր սկզբունքը, որով որոշվում է տվյալ պետության՝ Եվրոպական միությանը անդամակցելուն համապատասխանությունը:

Թեև հոդվածում որոշ փոփոխություններ արվեցին, սակայն լրամշակումից հետո կարծես շատ բան չփոխվեց: 2012 թ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշում կայացրեց այն մասին, որ Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածում ներառված տերմինների շրջանակը, այնպես, ինչպես այն մեկնաբանում են դատական իշխանությունները, չափազանց լայն է և անորոշ, ուստի հոդվածը շարունակում է սպառնալիք մնալ խոսքի ազատ արտահայտման իրավունքի առումով: 301-րդ հոդվածն անհամապատասխան համարվեց օրենքի պահանջվող «որակական հատկանիշներին», քանի որ բազմիմաստ տերմինների պատճառով դրա հետևանքներն անկանխատեսելի էին²⁸: Դատարանը խոսքի ազատության իրավունքի ոտնահարում համարեց թուրք պատմաբան-հանրաբան, Հայոց ցեղասպանությանն առնչվող խնդիրների մասին բացահայտորեն գրող Թաներ Աքչամի դեմ հետաքննությունը²⁹: 2008 թվականի փոփոխությունների առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշեց, որ «թեև **«թուրքականություն»** տերմինը փոխարինվել է **«թուրք ազգ»** կապակցությամբ, որևէ փոփոխություն կամ էական տարբերություն կարծես չկա այս հասկացությունների մեկնաբանության մեջ, որովհետև Վճռաբեկ դատարանում (Court of Cassation) դրանք նույն կերպ են ընկալվում»³⁰:

301-րդ հոդվածը կարևոր է եղել և շարունակում է մնալ այդպիսին ոչ միայն իրավական, այլև քաղաքական առումով, քանզի անխուսափելի է, որ դրա կիրառությունը կտրուկ և անսպասելի փոփոխությունների ենթարկվի՝ պայմանավորված քաղաքական մթնոլորտում, նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքների դաշտում իրավական և մեկնողական վերաբերմունքի փոփոխություններով: Քննարկվող իրավական դրույթը, որի կիրառումն առնչվում է ինչպես պետության ինքնիշխանությանը, այնպես էլ պետական կառույցների և հատկապես դատական մարմինների կողմից մարդու իրավունքների հիմնարար արժեքները, այդ թվում՝ խոսքի ազատությունը հասկանալու և մեկնաբանելու կարևորագույն խնդիրներին, փաստորեն հիմնված է ազատությունը ոչնչացնելու արատավոր գաղափարի վրա³¹:

27 St'u FM Güll: Changes Must be Made to Article 301, Hürriyet (January 2007):

28 St'u ECtHR judgement, On Application No. 25520/07, 2012:

29 St'u ECtHR judgement of 25/10/2012, Article 10 of ECtHR, paragraph 92:

30 ECtHR judgement of 25/10/2012, Article 10 of ECtHR, paragraph 93.

31 St'u Algan B., նշվ. աշխ., էջ 2240:

Տասից ավելի տարի է անցել 301-րդ հոդվածի «բարեփոխումից, սակայն ակնհայտ է, որ այդ հոդվածը խախտելու համար մեղադրվող անձանց թիվը գրեթե չի նվազել, իսկ դա նշանակում է, որ այն ձախողվել է որպես օրենք, քանզի Թուրքիայում խոսքի ազատության իրավունքը լիարժեքորեն չի գործում: Պարզ է, որ Թուրքիայի պետական մարմինները քաղաքական առումով կողմնակալ են, և խոսքի ազատության նրանց մեկնաբանությունը չի համընկնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տեսակետին: Պետք է ենթադրել, որ խնդրի լուծումը ոչ թե տվյալ օրենքը կամ որևէ այլ օրենք փոփոխելու, այլ մարդկանց մտածողությունը փոխելու մեջ է:

3. Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի լեզվական մտաշահարկային հատկանիշները

Այժմ փորձենք ի ցույց դնել 301-րդ հոդվածի 2008 թ. «բարեփոխումները», որոնք միանգամայն մակերեսային բնույթ ունեն: Կատարված փոփոխությունները ըստ էության բացահայտում են թուրք օրենսդիրների կողմնակալ ու արգահատելի լեզվական քաղաքականությունը, որը միտված է եղել օգտագործելու բառերի ուժը հօգուտ Թուրքիայի արատավոր շահերի³²:

Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի 2005 թ. և 2008 թ. տարբերակների անգլերեն տեքստերի քննությունը հետաքրքիր փաստեր է բացահայտում:

Article 301 (June 1, 2005)

1. Public **denigration** of **Turkishness**, the **Republic** or the Grand National Assembly of Turkey shall be punishable by imprisonment of between six months and three years.

2. Public **denigration** of the Government of the Republic of Turkey, the judicial institutions of the State, the military or security structures shall be punishable by imprisonment of between six months and two years.

3. In cases where **denigration** of Turkishness is committed by a Turkish citizen in another country, the punishment shall be increased by one third.

4. Expressions of thought intended to criticize shall not constitute a **crime**³³.

(Turkey: Article 301 2006:1)

32 Տե՛ս **Gasparyan S.**, Manipulation of Ideas in and through Language, LAW 2018: Current Problems of Law and Legal Science, Eds. **Boris Krivokapić, Dragan Čović, Nedo Dani lović**, Belgrade, ICIM Publishing, 2018, էջ 333-353:

33 Հմնտ. հոդվածի այս տարբերակի թուրքերեն տեքստի հետ.

(1) Türklüğü, Cumhuriyeti veya Türkiye Büyük Millet Meclisini alenen aşağılayan kişi, altı aydan üç yıla kadar hapis cezası ile cezalandırılır.

(2) Türkiye Cumhuriyeti Hükümetini, Devletin yargı organlarını, askeri veya emniyet teşkilatını alenen aşağılayan kişi, altı aydan iki yıla kadar hapis cezası ile cezalandırılır.

(3) Türklüğü aşağılamann yabancı bir ülkede, bir Türk vatandaşı tarafından işlenmesi halinde, verilecek ceza üçte bir oranında arttırılır.

(4) Eleştiri amacıyla yapılan düşünce açıklamaları suç oluşturmaz.

Տե՛ս Նիտե 301-ին Yeni ve Eski Hali, «Hürriyet», 08.01.2008:

Article 301 (April 30, 2008) by Article 1 of the Law no. 5759)

Degrading Turkish Nation, State of Turkish Republic, the Organs and Institutions of the State

1. A person who publicly **degrades Turkish Nation, State of the Turkish Republic**, Turkish Grand National Assembly, the Government of the Republic of Turkey and the judicial bodies of the State shall be sentenced a penalty of imprisonment for a term of six months to two years.

2. A person who publicly **degrades** the military or security organisations shall be sentenced according to the provision set out in paragraph one.

3. The expression of an **opinion** for the purpose of criticism does not constitute an **offence**.

4. The conduct of an investigation into such an offence shall be subject to the permission of the Minister of Justice³⁴.

(Penal Code of Turkey 2016:99)

Հարկ է նշել, որ իրավագիտական տեսանկյունից ակնհայտ նորություն է 2008 թ. տարբերակի վերջին մասը. «The conduct of an investigation into such an offence shall be subject to the permission of the Minister of Justice» (Այս իրավախախտման առնչությամբ հետաքննությունը թույլատրվում է արդարադատության նախարարի հրամանով): Այս մասի նպատակն է հանրային մեղադրողներին ետ պահել դատական գործ հարուցելու կամայական որոշումից նրանց դեմ, ովքեր քննադատում են կառավարությանը կամ փորձում են բացել Թուրքիայի պատմության մութ էջերը: Սակայն, ի տարբերություն Թուրքիայի նախկին քրեական օրենսգրքի (1926-2005 թթ.) 159-րդ հոդվածի, 2008 թ. տարբերակում ներառված այս նոր կետը վերաբերում է թույլտվություն ստանալու պահանջին՝ միայն հետաքննություն սկսելու համար: Դա նշանակում է, որ, նախարարից բացի, Արդարադատության նախարարության որևէ այլ մակարդակի պաշտոնյա լիազորված չէ վերահսկելու «անցանկալի քաղաքացիների» դեմ դատավարություն սկսելու գործընթացը: Այնուհետև՝ երրորդ կետը, որը վերաբերում է մեկ այլ երկրում Թուրքիայի քաղաքացու կողմից թուրքականությունը հրապարակավ անարգելուն, հանվել է հոդվածի տեքստից:

34 Stü Madde 301- (Değişik: 30/4/2008-5759/1 md.).

(1) Türk Milletini, Türkiye Cumhuriyeti Devletini, Türkiye Büyük Millet Meclisini, Türkiye Cumhuriyeti Hükümetini ve Devletin yargı organlarını alenen aşağılayan kişi, altı aydan iki yıla kadar hapis cezası ile cezalandırılır.

(2) Devletin askerî veya emniyet teşkilatını alenen aşağılayan kişi, birinci fıkrâ hükmüne göre cezalandırılır.

(3) Eleştirî amacıyla yapılan düşünce açıklamaları suç oluşturmaz.

(4) Bu suçtan dolayı soruşturma yapılması, Adalet Bakanının iznine bağlıdır.

Stü 8965, Türk Ceza Kanunu, Kabul Tarihi, 26/9/2004, Birinci Kitap, Genel Hükümler Birinci Kısım, Temel İlkeler, Tanımlar ve Uygulama Alanı, Birinci Bölüm, Temel İlkeler ve Tanımlar:

մանության համար տարբեր միավորներ են կիրառում՝ **to humiliate, to insult, to deride**, և **denigration**՝ սկզբնական փաստաթղթում, **degrade**՝ վերջնականում: **Denigrate** բայի ստուգաբանությունը ցույց է տալիս, որ այն սերում է լատիներեն **dēnigrāre** (սևացնել, վարկաբեկել), **nigrāre** (սևացնել) ու **niger** (սև) բառերից և, ըստ տարբեր բառարաններում տրված մեկնաբանությունների, մատնանշում է անարդար կերպով քննադատելու, վարկաբեկելու, սևացնելու և արատավորելու գործընթաց: **Denigration**-ը, որը իրավագիտական տեսանկյունից ընդունված է համարել արգելված վարքագիծ, ըստ էության, խոսության կադապար է՝ «վարկաբեկման դիսկուրս», որը հաճախ է կիրառվում դատավարական գործընթացի հռետորաբանության մեջ՝ վիրավորելու կամ նսեմացնելու նպատակով³⁶: Իհարկե, այստեղ կարևոր է հաշվի առնել, որ յուրաքանչյուր դեպքի մանրակրկիտ քննություն կպահանջի այնքան ժամանակ, մինչև ապացուցվեն կամ հերքվեն վարկաբեկումն ու անարգանքը, հատկապես որ **denigration** բառի գործածությամբ **denigration of Turkishness** (թուրքականության անարգում) բառակապակցությունը չափից դուրս երկիմաստ է դառնում: Թուրքիայի մի շարք անհատների դեմ իրականացված վերը նշված դատական հետապնդումների քննությունից պարզ է դառնում, որ այս սահմանափակող արտահայտությունը ներմուծված է հնչող տարակարծությունները լռեցնելու նպատակով և սպառնում է խոսքի ազատության հիմնարար օրենքին: Հասկանալի է, որ եթե Հայոց ցեղասպանության մասին խոսող մարդիկ ազատագրվում են ըստ 301-րդ հոդվածի՝ **թուրքականությունը, Հանրապետությունը կամ Թուրքիայի Հանրապետության մեջլիսը** վարկաբեկելու մասի, ուրեմն նրանք, անտարակույս, պետք է համարվեն խղճի բանտարկյալներ (*prisoners of conscience*³⁷):

Փորձելով **անարգումն ու վարկաբեկումը** սահմանազատել քննադատական կարծիքներից (որոնք չեն դիտվում որպես հանցագործություն)՝ 2008 թ. օրենքի նախագծի հեղինակները, առաջին և երկրորդ մասերի անգլերեն տեքստում դիմելով լեզվական շահարկման, **denigration** գոյականը փոխարինել են **degrade (անարգել, նվաստացնել)** բայաձևով, որը, ըստ էության, նույն իմաստն է արտահայտում: Հետևաբար ակնհայտ է, որ այս փոփոխությունը հոդվածի բովանդակության մեջ որևէ բան չի ավելացրել, բացի նրանից, որ թուրքացրել է տեքստի ընդհանուր հռետորաբանական ազդեցությունը և այն ներհատուկ բացասական ոճական երանգավորումը, որն առկա է **denigration**-ի հիմքում: Փոփոխությունը ըստ էության շեշտադրել է տվյալ հասկացությունը

Prospects in Turkey. Philadelphia: University of Pennsylvania Press, 2007, էջ 262-274; Lester A. Redefining Terror, Sage Journals, Vol. 36, issue 2, 2007, էջ 103-107 և այլն:

36 Տե՛ս Horwitz P., Denigration as Forbidden Conduct and Required Judicial Rhetoric, Constitutional Law JOTWELL, 2014, էջ 1-3:

37 **Խղճի բանտարկյալն** այն անձն է, որն ազատագրվել է իր պետության մեջ չհանդուրժվող քաղաքական և կրոնական հայացքներ ունենալու համար: Իրավագիտական այս բառակապակցությունը ստեղծել և շրջանառության մեջ է դրել Փիթեր Բենենսոնը (տե՛ս Benenson P., The Forgotten Prisoners, London Observer newspaper (28 May, 1961):

որպես հանցագործություն: **Degrade (անարգել, նվաստացնել)** բայը հոմանիշ է **denigrate (անարգել, վարկաբեկել)** բային³⁸ և սովորաբար բացատրվում է որպես «**ցածրացնել կարգը, աստիճանը, կարգավիճակը, իջեցնել ցածր կամ պակաս ազդեցիկ մակարդակի, նվազեցնել բաղձալիությունը, հարգանքը**»³⁹:

Գործարանական տեսանկյունից 301-րդ հոդվածի երկու տեքստերն էլ իրավագիտական դիսկուրսի նմուշներ են, որոնց նպատակը օրենքի կիրառումն է: Եվ քանի որ այս փաստաթղթերն արտացոլում են ուժի և իշխանության հարաբերությունները հասարակության հետ, ուստի մեր հետազոտության համար շահեկան ենք համարել դրանց դիտարկումը նաև դիսկուրսի քննադատական վերլուծության դիրքերից:

301-րդ հոդվածի 2005 թ. տեքստի չորս մասերից յուրաքանչյուրը ներկայացված է պատմողական ասույթով: Գործարանական տեսանկյունից այս ասույթները գործում են որպես հաստատական խոսքային ակտեր՝ որոշակի խնդիրների առնչությամբ Թուրքիայի կառավարության դիրքորոշումն օրինականացնելու նպատակադրվածությամբ: Դրանք վերաբերում են հասարակական անցանկալի գործողության, անարդարացիորեն արված հրապարակային քննադատության, տվյալ դեպքում՝ հրապարակավ հնչեցրած անարգանքի (**denigration**) դրսևորմանը: Այս ասույթների խոսողական-ներգործական (պերլոկուտիվ) ազդեցությունն այն է, որ որևէ մեկն իրավունք չունի քննադատելու պետականությունը, բարձրագույն իշխանության կառույցները (ինչպես, օրինակ, Հանրապետությունը կամ Թուրքիայի Հանրապետության մեջլիսը), որոնք քաղաքական գերիշխանություն ունեն Թուրքիայում: Իրականում այս ազդեցությունն ավելի տեսանելի է առաջին երեք մասերում, իսկ չորրորդում երկիմաստ և անորոշ ձևակերպումների շնորհիվ, ինչպես, օրինակ, “Expressions of **thought** intended to criticise” (**դատողություններ**, որոնց նպատակը քննադատելն է), այն նվազում է: Այստեղ, անկասկած, նկատի են առնվում անուղղակի քննադատության այն դեպքերը, երբ պետական իշխանության և պետականության նկատմամբ բացասական վերաբերմունքն արտահայտված է բառախաղի, ներակայման և ներիմաստի միջոցով: Հեշտ չէ սահմանազատել «քննադատելու մտադրությունը» և «քննադատման» իրական գործողությունը: Ուստի, այս հաստատական ասույթը ներմուծելով հոդվածի շարադրանք, օրենսդիրները ստեղծել են քողարկված «լեզվական սողանցք»՝ լեզվական նյութը սուբյեկտիվ մեկնաբանելու համար. մի բան է ասել և կատարել քննադատության խոսողական-ներգործական (պերլոկուտիվ) գործողություն, մեկ այլ բան՝ դա իրագործելու մտադրություն ունենալ: Ինչևէ, հրապարակավ ար-

38 St u Word Reference Random House Learner’s Dictionary of American English, 2017:
 39 St u Merriam-Webster Dictionary, 2017:

տահայտված ցանկացած միտք, գաղափար, դատողություն կարելի է ընկալել կա՛մ որպես ուղղակի քննադատության օրինակ, կա՛մ պարզապես քննադատելու մտադրություն: Այս մտաշահարկային լեզվական քաղաքականությունը, ինչպես կարելի է կռահել, հնարավորություն տվեց իշխանություններին պատիժ գործադրելու որոշ անցանկալի ընդդիմադիրների նկատմամբ և ներում շնորհելու պակաս անհաճո այլ ընդդիմադիրների⁴⁰:

Եզրակացություններ

Քննությունը ցույց է տալիս, որ մտաշահարկային մարտավարությունը, անկասկած, լայնորեն կիրառվել է Թուրքիայի քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածում, և դրա վերափոխված տարբերակում էլ խոսքի ազատության իրավունքի սկզբունքը շարունակում է ոտնահարված մնալ, քանզի կատարված փոփոխությունները բոլորովին չեն համապատասխանում միջազգայնորեն ճանաչված պահանջներին: Չնայած այդ հոդվածը հանրության և հասարակության օգտին մեկնաբանելու «հմուտ ջանքերին»՝ փոփոխություններն ըստ էության արվել են Եվրոպական խորհրդի աչքերին «թոզ փչելու» և մարդկանց ազատ կարծիքը վերահսկելու՝ օրենսդիրների իրական մտադրությունը քողարկելու համար: Բազմիմաստ և ոչ հստակ բառերի անընդունելի կիրառությունը տեղ է թողնում երկիմաստության և կրկնակի չափանիշների համար: Հոդվածում միանգամայն ակնհայտ է մարդու հիմնարար իրավունքներից մեկի հանդեպ լեզվի միջոցով իրականացված մտաշահարկման ռազմավարությունը: 301-րդ հոդվածը շարունակում է մնալ որպես այլախոհությունը ճնշող, ազգայնական շահերին ծառայող գործիք Թուրքիայի իշխանությունների ձեռքում և իրական սպառնալիք՝ խոսքի ազատության իրավունքի գործառնման տեսանկյունից:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ ՄԱԿ-ի անդամ պետություններից և ոչ մեկը նպատակահարմար չի գտել իր երկրի օրենսդրական համակարգում 301-րդ հոդվածին համարժեք հոդված հաստատել: Արդյոք սա վկայությունը չէ՞ այն իրողության, որ Թուրքիայի Հանրապետությունում հորինված ազգային ինքնությունը հագեցած է չիուսադրող անճշտություններով: Եթե այո, սպա հարկ է համապատասխան միջոցներ ձեռնարկել պետության հովանու ներքո իրականացվող այս լայնամասշտաբ նսեմացումը թոթափելու համար:

40 2006 թ. հինգ մտավորականի մեղանդրանք ներկայացվեց պետական կառույցներն անարգելու համար: Մասնավորապես, քննադատել էին դատարանը, որը 2005 թ. կարգադրել էր փակել Ստամբուլի Բիլգի համալսարանում կայանալիք մի գիտաժողով՝ նվիրված Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրագործված՝ ոչնչացման աննախադեպ գործողություններին առնչվող խնդիրների քննությանը: Առաջ քաշված մեղադրանքները ենթադրում էին մինչև 10 տարի ազատազրկում: Քանի որ դա, ըստ ժամկետների սահմանափակման օրենքի, գերազանցում էր նախատեսվածը, 2006 թ. ապրիլի 11-ին դատարանը կարճեց նրանցից չորսի գործը, իսկ հինգերորդը՝ հանրությանը քաջ հայտնի գիտնական Մուրատ Բելգեն, 2006 թ. հունիսի 8-ին անմեղ ճանաչվեց (տես **Murat Belge, a Renowned Turkish Academic, Leaving Turkey as ‘Scholar at Risk’**, SCF, February 15, 2018):

Սեդա Ք. Գասպարյան -13 մենագրության և բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է լեզվի և ոճի, տեքստի մեկնաբանության, թարգմանության տեսության, նախադրական լեզվաբանության հարցերը:

Էլեկտրոնային հասցե՝ sedagasparyan@yandex.ru

Summary

THE USE OF WORD MANIPULATION IN ARTICLE 301 OF THE TURKISH PENAL CODE

Seda Q. Gasparyan

Doctor of Philological Sciences

Key words - intersection of linguistics and law, Article 301 of the Turkish Penal Code, human rights, freedom of expression, linguistic manipulation, manipulative strategies, humiliation, state-sponsored derogation.

The article aims at presenting the results of the main conclusions of our investigation directly connected with the “infamous” Article 301 which, in essence, is an evil for the Turkish society. According to the specialists of the International law, the given article is a serious threat meant to endanger the fundamental right of humans to Freedom of Expression.

The topic of concern is viewed from the perspective of the interconnection and intersection of linguistics and law. The author concentrates on the organization of linguistic units in the versions of 2005 and 2008 of Article 301 and provides theoretical and practical linguistic interpretation of the language data. An attempt is also made to offer an insightful account of the legal aspect of those documents. The special emphasis laid on the analysis of the manipulative strategies exerted in the document in question reveals that the basic function of law to communicate the truth and express clear-cut, accurate and understandable ideas has been violated here for they are meant to control people and manipulate their perception and interpretation through the abuse of language to achieve practical goals.

The investigation reveals that verbal manipulation preconditions the usage of ambiguous expressions and all sorts of double-speak. It implies a beginning in smaller and more discrete segments of linguistic forms that connect to larger

linguistic entities. The latter undergoing some transformations turn out to be relatively unexpected by the addressee.

Manipulation is directly connected with domination, control and demagogic language, and manipulators are experts in using manipulative tools, among which of prime importance are a great command of language and the rhetoric of persuasion.

Thus, by applying the comparative-contrastive method of research the present article reveals linguistic facts, the investigation of which exposes the manipulative strategies implemented in Article 301 to the readers and unveils the dangers arising as a result of these implementations.

Резюме

МАНИПУЛЯТИВНОЕ ПРИМЕНЕНИЕ ЯЗЫКА В СТАТЬЕ 301 УГОЛОВНОГО КОДЕКСА ТУРЦИИ

Седа К. Гаспарян
Доктор фил. наук

Ключевые слова - взаимосвязь и взаимопроникновение языкознания и права, статья 301 Уголовного кодекса Турции, права человека, свобода слова, языковая манипуляция, манипулятивные стратегии, унижение, инициируемое законами государства.

Цель данной статьи - представить выводы основной темы нашего исследования, непосредственно связанной с «плачевной» статьей 301 Уголовного кодекса Турции, по сути являющейся злом для турецкого общества. По оценке специалистов международного права, данная статья является серьезной угрозой, ограничивающей право человека на свободу слова.

Проблема рассматривается с точки зрения взаимосвязи и взаимопроникновения лингвистики и права. Автор рассматривает организацию языковых единиц в двух текстах (2005 г. и 2008 г.) указанной статьи и дает толкование языковых фактов на основе как теоретических, так и практических наблюдений. Автором также предпринимается попытка разъяснить правовой аспект этих документов и выявить применение в них манипулятивных стратегий. При этом становится ясно, что здесь нарушается основополагающая функция закона, а именно – передать четко сформулированные, понятные и правдивые мысли, так как манипулятивное использование языка нацелено на то, чтобы иметь возможность контролировать восприятие и понимание людей, а также добиться выполнения своих прагматических целей.

Исследование показывает, что применение манипулятивной стратегии предопределяет использование в тексте неопределенных, нечетких или двусмысленных выражений. Решающим здесь является не употребление каких-то особых языковых элементов, а дискурсивная ситуация, в которой осуществляется манипуляция.

Манипуляция ассоциируется с властью, управлением и демагогией, а важнейшими инструментами ее осуществления прежде всего выступают хорошее знание языка и способность говорящего/пишущего повлиять на слушающего/читающего, уговорить его, применяя разные риторические приемы.

В исследовании с применением сопоставительного метода на основании отбора и анализа языковых фактов выявляется внедрение стратегии умышленности в статью 301 Уголовного кодекса Турции и указывается опасность, содержащаяся в этом юридическом документе.